# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՆ-ԲՄ-ԽԾՁԲ-24/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 14 » « դեկտեմբերի » 2023թ.**
**ժամը 11:00**

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Ն.Աբրահամյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Վ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Ա.Մխիթարյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Լ.Ձոհրաբյան |

Բացակայում ե

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Հ.Մաթևոսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Լ.Սինանյան |

## 1. «ՇՄՆ-ԲՄ-ԽԾՁԲ-24/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Բույգարո» ՍՊ և «Գրիտիգ» ՍՊ ընկերությունները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները և ներկայացրել են.

1.1.1. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը,

1.1.2. տեղեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին՝ (հավելված 1.2), առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև՝ մասնագետնի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

## 2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Չ/հ | Ծառայության անվանումը | Գնի առաջարկները (դրամ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Ռիջիդ» ՍՊԸ | | «Բույգարո» ՍՊԸ | | «Գրիտիգ» ՍՊԸ | |
| | | Գինն առանց ԱԱՀ | Գինը | Գինն առանց ԱԱՀ | Գինը | Գինն առանց ԱԱՀ | Գինը |
| 1 | Մարտունի մասնաճյուղի Երանոսի տեղամասի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 400 000 | 400 000 |
| 2 | Մարտունի մասնաճյուղի Մարտունի տեղամասի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 600 000 | 600 000 |
| 3 | Նորատուսի մասնաճյուղի Այրիվանի տեղամասի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 200 000 | 200 000 | 150 000 | 150 000 | - | - |
| 4 | Նորատուսի մասնաճյուղի Նորատուսի տեղամասի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 450 000 | 450 000 | 500 000 | 500 000 | - | - |
| 5 | Վարդենիսի մասնաճյուղի Արեգունի տեղամասի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 200 000 | 200 000 | 150 000 | 150 000 | - | - |

2.1. Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. Տվյալներ՝ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

3.1. Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ ստացել են հետևյալ գնահատականները.

| *Գնահատման չափանիշը* | *Առավելագույն միավորը* | «Ռիջիդ» ՍՊԸ | «Բույգարո» ՍՊԸ | «Գրիտիգ» ՍՊԸ |
|---|---|---|---|---|
| Մասնագիտական փորձառություն | 40 | 40.00 | 40.00 | 40.00 |
| Աշխատանքային ռեսուրսներ | 30 | 30.00 | 30.00 | 30.00 |
| **Ընդամենը՝ ՏԱ** | **70** | **70.00** | **70.00** | **70.00** |

## 4. Հանձնաժողովը որոշեց՝

---------------------------------------------------------------------

(Ն.Աբրահամյան)

4.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը և Հրավերի 1-ին մասի 8.6 կետը՝ «Ռիջիդ» ՍՊ և «Բույգարո» ՍՊ ընկերություններին չափաբաժիններ 1-ով և 2-ով առաջարկված նվազագույն գների հավասարության պայմանով հրավիրել միաժամանակյա բանակցությունների մինչև 40 րոպե տևողությամբ, 2023 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում: Բանակցությունների վարման պայմաններն են.

չափաբաժիններ 1-ի և 2-ի համար՝ տևողությունը մինչև 20-ական րոպե, յուրաքանչյուր մասնակցի նոր գնային առաջարկի ներկայացման համար տրամադրվելու է 3 րոպե ժամանակ, բանակցությունները վարվելու են մինչև սահմանված ժամանակի լրանալը կամ նվազագույն գնի ձևավորումը:

4.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ ծանուցել «Ռիջիդ» ՍՊ և «Բույգարո» ՍՊ ընկերություններին բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

---------------------------------------------------------------------

(Ն.Աբրահամյան)

5.1. «ՇՄՆ-ԲՄ-ԽԾՁԲ-24/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների հետ բանակցությունների նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը՝ 2023 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

## 6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | ____________ | Ն.Աբրահամյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ____________ | Վ.Հովհաննիսյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ____________ | Ա.Մխիթարյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | ____________ | Լ. Ձոհրաբյան |